## ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

| Մ Ո Ւ Տ Ք. | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամէնը Ռ. | Ընդամէնը Կ. |
|---|---|---|---|---|
| ա) Անցեալ տարուանից մնացած՝ | | | | |
| I. Առևտրական բանկում ընթացիկ հաշիւ . | 2497 | 33 | | |
| Առ ձեռն գումար . . . . | 300 | 75 | 2798 | 8 |
| II. Տոկոսաբերը ի գումարի 11,290 ռ., որ ընդունուած է և գնուած . . | — | — | 10458 | 84 |
| | | | 13256 | 92 |
| բ) Նուիրաբերութիւններ՝ | | | | |
| Համաձայն կտակի Դաւիթ Տէր-Նիկողոսեանցի | 500 | — | | |
| Հանգուցեալ Կատարինէ Ռօտինեանցի ժառանգներից . . . . . . | 250 | — | | |
| Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնից Էֆէնդեանցի գումարից. . . | 29 | 95 | | |
| Պ. Ստեփաննոս Մանուէլեանցից. . . | 15 | — | 794 | 95 |
| գ) Անդամակցական վճարներ՝ | | | | |
| Իսկական (152 անդամ) . . . . | 912 | — | | |
| Մշտական (7 անդամ) . . . . | 700 | — | 1612 | — |
| դ) Պարահանդէսներից, կօնցերտներից և այլն. | | | | |
| Աբասթումանում կայացած կօնցերտից . . | 106 | — | | |
| Պարահանդէսից . . . . . | 800 | — | | |
| Ներկայացումից . . . . . | 462 | 20 | 1368 | 20 |
| ե) Տոկոսիք ընկերութեան գումարից՝ | | | | |
| Ընթացիկ հաշուից. . . . . | 49 | 66 | | |
| Կուպոններից . . . . . . | 565 | 70 | 615 | 36 |
| զ) Երկու ուսումնարանի աշակերտուհիներից ուսումնական պիտոյքների վճար . . | 274 | — | 274 | — |
| է) Կարուձևի դպրոցի պատուէրներից մուտք . | 1338 | 75 | 1338 | 75 |
| Աշակերտուհիների ձեռագործի վաճառումից . | 113 | 25 | 113 | 25 |
| Գումար . . | — | — | 6116 | 51 |
| Ընդամէնը: | — | — | 19373 | 43 |

Բացի սորանից ընկերութիւնն ունի երեք հատ Օսմանեան արծաթեայ դրամ, դպրոցական կահկարասիք և այլն իրեղէններ։

| Ե Լ Ք. | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| ա) Ընդհանուր ծախսերը | | | | |
| Դիւանական ծախսեր . . . . . . . | 8 | 50 | | |
| Մանր ծախսեր, յայտարարութիւններ եւ այլն | 90 | 25 | 98 | 75 |
| բ) Նուիրատուութիւնք յօգուտ ուսումնարանաց, մասնաւոր անձանց և ընտանեաց: | | | | |
| Յօգուտ չքաւոր ուսանողաց ուսման վճարը . | 68 | — | | |
| » Զրկինեանց եկեղեցւոյ ուսումնարանի | 50 | | | |
| » Չխար գիւղի ուսումնարանի . . | 50 | — | | |
| Ջրօհնէքին և Զատկին բաժանեցաւ չքաւոր ընտանեաց . . . . . . | 200 | — | 368 | — |
| գ) Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի ծախսեր. | | | | |
| Կահկարասիք . . . . . | 1346 | — | | |
| Վառելափայտ . . . . . | 82 | 5 | | |
| Ուսումնական պիտոյք . . . . | 130 | — | | |
| Ձեռագործի նիւթեր . . . . | 112 | 95 | | |
| Վարժուհիների եւ ուսուցիչների ռոճիկ . . | 1869 | 88 | | |
| Աղախնու ռոճիկ . . . . | 130 | — | | |
| Մանր ծախս . . . . . | 35 | 15 | 2506 | 3 |
| դ) Ս. Նշան եկեղեցւոյ շինութեան նորոգութիւնը . . . . . | 543 | 10 | 543 | 10 |
| ե) Կարուձեւ դպրոցի ծախսեր | | | | |
| Ուսուցչուհիների ռոճիկ . . . . | 1058 | 15 | | |
| Բնակարանի վարձ . . . . . | 500 | — | | |
| Կահկարասիք . . . . . | 158 | 5 | | |
| Աղախնու ռոճիկ . . . . . | 156 | — | | |
| Վառելափայտ . . . . . | 83 | 22 | | |
| Մանր ծախս . . . . . | 73 | 82 | | |
| Ձեռագործի նիւթեր . . . . . | 85 | 68 | 2114 | 92 |
| զ) Տոկոսաբեր թղթեր . . . . | 177 | 2 | 177 | 2 |
| է) Պատուէրներից ստացած արդիւնքից յատկացրած է վարպետուհիներին և աշակերտուհիներին . . . . . . | 225 | 56 | 225 | 56 |
| ը) Տուած է նոյն աշակերտուհիներին գրքերով ու դրամով . . . . . | 124 | — | 124 | — |
| թ) Ապառիկ 1889. . . . . . | 7 | 30 | 7 | 30 |
| Գումար . . | — | — | 6164 | 68 |
| Անցեալ տարուայ մնացած տոկոսաբեր թղթերը | | | 10458 | 84 |
| Ընթացիկ հաշիւ Թիֆլիսի առևտրական բանկում | | | 1654 | 74 |
| Առ ձեռն գանձարանում . . . | — | — | 982 | 28 |
| Կարուձեւի դպրոցի աշակերտուհիներին հասանելի վարձատրութիւնը իբրև աւանդ . . | — | — | 112 | 89 |
| Ընդամենը | | | 19373 | 43 |

## ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ ՀԱՇԻՒԸ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱԼԱԼԵԱՆՑԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ Ի 1891 ԱՄԻ·

| | Տոկոսաբեր թղթերով· | Առձեռն դրամով | |
|---|---|---|---|
| | ՌՈՒԲԼԻ· | ՌՈՒԲԼԻ· | Կ· |
| **ՄՈՒՏՔ·** | | | |
| Մնում է ցմէկն յունուարի 1890 ամի | 45·200 | 244 | 31 |
| Ստացուած են՝ տոկոսներ 2·547 ր· 15 կ· եւ շիջած տոկոսաբեր թղթերի վճարներ 400 ր· ընդամէն | — | 2·947 | 15 |
| Գնուած են տոկոսաբեր թղթեր արժողութեամբ | 3·100 | — | — |
| | 48·300 | 3·191 | 46 |
| **ԾԱԽՔ·** | | | |
| Շիջած են տոկոսաբեր թղթեր արժողութեամբ | 400 | — | — |
| Տոկոսաբեր թղթեր գնելու համար ծախսուած է | — | 3·077 | 40 |
| Լրագիրներում հաշիւը տպագրելու համար 1889 թ· 45 ր· 54 կ· եւ այլ ծախսեր 1 ր· 25 կ· | — | 46 | 79 |
| | 400 | 3·124 | 19 |
| Առ 1 յունուարի 1891 ամի առձեռն պատրաստ կայ տոկոսաբեր թղթերով | 47·900 | — | — |
| Առձեռն դրամով | — | 67 | 27 |

ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ԳԷՈՐԳ ՔԱՆԱՆԵԱՆՑ.

## ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ.

16 Ապրիլի· Վեհափառ Հայրապետի մահուանից յետոյ Սրբազան Սինոդը իւր Ատենապետի տեղապահութեան պաշտօնը յանձնեց Սինոդի երիցագոյն անդամ՝ Գեր· Երեմեայ եպիսկոպոսին մինչ ցգահակալութիւն նորընտիր Հայրապետի:

---

3 Մայիս· Ըստ հրահանգութեան Բարձ· Կառավարութեան, Սրբազան Սինոդը ընդ ձեռն Գլխ· Կառավարութեան Կովկասու ուղարկեց Ծանուցողական հրովարտակներ Ռուսաստանի և արտասահմանեան բոլոր թեմական առաջնորդներին, նոյնպէս և Կ· Պօլսոյ և Ս· Երուսաղէմի Սրբազան Պատրիարքներին և Տաճկահայոց բոլոր առաջնորդներին, ներկայ գտնուելու Ս· Էջմիածնում Նոր Հայրապետի ընտրութեանը՝ պատգամաւորութեամբ, Հայաստանեայց Ս· Եկեղեցւոյ ընտրողական կարգի համաձայն: Ընտրութեան օրը որոշուած է Մայիսի 3-ին - առաջակայ 1892 թ·:

---

3 Մայիսի· Ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի, Սրբազան Սինոդը պատուիրեց Ռուսաստանի Հայոց բոլոր առաջնորդներին կառավարել ծխական դպրոցները ամենայն լրջմտութեամբ 1884 թ· կանոնների և 1886 թ· և 1889 թ· Բարձ· բացատրութեանց, և ի Տէր հանգուցեալ Վեհ· Հայրապետի հաստատուած կանոնների համեմատ: Հոգաբարձուների հաստատութիւնը, նոր դպրոցներ բանալը, և առհասարակ բոլոր խնդիրների լուծումն, որոնք կախուած են ամենայն Հայոց Հայրապետի տնօրէնութիւնից՝ թողնել մինչ ցամբառնալ նորընտիր Հայրապետի՝ յառաքելական Աթոռ Սրբոյն Գրիգորի· որի մասին և տալ տեղեկութիւն համայն ազգայնոց: